ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի «Նաիրի Զարյանի անվան h130 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ

1. ՄԱԹԵՄԱՏԻԿԱ (25 ժամ և 15 ժամ),
2. ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ(8 ժամ)
3. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ (13 ժամ)

նշված առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

✓ Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (ձև 1) մեկ լուսանկար 3X4 չափի

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)

-անձը հաստատող փաստաթուղթ

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև 5)

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 13-ին ժամը 14:30-ին, Երևանի Նաիրի Զարյանի անվան h 130 հիմնական դպրոցում,
Հասցեն՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան նրբ.3:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 22-23-00 հեռախոսահամարով:

Email **school130@schools.am**